«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

2023

Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2023 թվականի մարտի 30-ի թիվ 41-Լ որոշման

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1) Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է համաձայն «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 700-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ Բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաեվ օտարերկրյա պետությունում գործող հայաստանի հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության կարգ»-ի :

2) «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի օտարերկրյա ուսանողները հանդիսանում են Իրանի, Սիրիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Իսրայելի, Կանադայի, Բելգիայի, Հունաստանի, Լիբանանի, Ուզբեկստանի, Ուկրաինայի քաղաքացիներ:

3) Բակալավրիատի դիմորդների ընդունելությունը անցկացվում է մրցութային հիմունքներով. մասնագիտական մանկավարժություն՝ ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտության համար մշակված նորմատիվային պահանջների համապատասխան՝ Ընդհանուր ֆիզիկական պատրաստության և մասնագիտական հարցազրույցի, իսկ առողջարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա և մարզական լրագրություն մասնագիտությունների համար՝ համապատասխանաբար կենսաբանություն առարկայի և մասնագիտական թեստերի արդյունքների հիման վրա:

4) Դասավանդման լեզուն հայերենն է:

5) ***Անհրաժեշտ փաստաթղթեր***

- Դիմում
- Դիմում-Հարցաթերթիկ
- Անձնագրի պատճեն՝ թարգմանված և նոտարի կողմից հաստատված (բնօրինակը և պատճենը)
- Ծննդյան վկայականի պատճեն՝ թարգմանությամբ և նոտարի կողմից հաստատված (բնօրինակը և պատճենը)
- Կրթության վկայականի պատճեն՝ թարգմանությամբ և նոտարի կողմից հաստատված (բնօրինակը և պատճենը)
- Տեղեկանք ընդհանուր առողջական վիճակի մասին
- Մարզական նվաճումների վկայագիր (եթե առկա են)
- 4 լուսանկար (3 × 4 չափի)
- Ինքնակենսագրություն

2. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ

3. Ընդունելության համար անհրաժեշտ է լրացնել Դիմումը և Դիմում-հարցաթերթիկը, որոնք հասանելի են Ինստիտուտի պաշտոնական կայք էջում, և նշված փաստաթղթերի հետ միասին ներկայացնել Կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն տվյալ ուսումնական տարվա համար սահմանված ժամկետակացույցի համաձայն:
4. Կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից փաստաթղթերի ընդունման և հաստատման դեպքում ինստիտուտը միայն կազմակերպում է ընդունելությունը:
5. Դիմորդների ընդունելությունը անցկացվում է մրցութային հիմունքներով, որի արդյունքները ներկայացվում են ՀՀ ԿԳՄՍՆ՝ հաստատման:
6. Հրամանագրելուց հետո նրանց ժամանակավոր կացություն տրամադրելու համար ինստիտուտը դիմում է ԿԳՄՍՆ, այնուհետև Անձնագրային և վիզաների վարչություն: